ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Աղթիս Գեղափառ Հայրապետը սեպտեմբերի 5ին երեկոյեան 7րդ ժամին Բիւրականի ամարայնոցից իջնելով ժամանեց Մայր Աթոռս։

***

Հաստատ աղբիւրներից տեղեկացանք, որ մեծ. Տիկին Սոփիա Մսերեանցը ներկայ տարւոյս օգոստոսի 22ին ներքին գործոց Նախարարից թոյլտուութիւն է ստացել հրատարակել Մոսկուայում «Փարոս Հայաստանի» անունով քաղաքական—գրականական պատկերազարդ ամսաթերթ, որը մինչև այդ օրը հրատարակուում էր իբրև հաւաքածու նորա ամուսին պ. Զայրմայր Մսերեանցը. տարեկան բաժանորդագրին է 5 ր։ Ցանկանում ենք մեծ. Տիկնոջը կատարեալ յաջողութիւն. ինչպէս ամսաթերթը իւր տեսակով՝ նոյնպէս և մեծ. Տիկին հրատարակիչը՝ մի նոր և ուրախալի երևոյթներ են մեր Ռուսահայոց գրականութեան ասպարիզում։ Ցուսով ենք, որ մեր սիրելի Ազգայիները արժանապէս կգնահատեն այս ուսումնասէր Տիկնոջ ազգօգուտ աշխատութիւնը և բազմաթիւ բաժանորդագրութեամբ կքաջալերեն նորան առանց վճառութեան յառաջ տանելու իւր այս գրականական վաստակը։

***

Խմբագրութիւնս մեծաւ շնորհակալութեամբ ստացաւ Տփխիսեցի Երզնկեանց Եղնիկ բարեշնորհ քահանայից իւր աշխատասիրած ձայնագրեալ մանկական երգարանը։ գինն է ամենայն տեղ 40 կ։ Սորա քննադատութիւնը (կրիտիկա) «Արարատի» առաջիկայ տետրի էջերում կհրատարակուի։

***

Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի աշակերտաց 1879—80 ուսումնական տարւոյ տարեկան հարցափնդրութիւնը սկսուեցաւ անցեալ մայիս ամսոյ 15ից և տևեց մինչև յունիսի 17ը։ որի ցուցակը «Արարատի» ներկայ տետրի մէջ հրատարակուում է։ որպէս զի թէ հեռաւոր ազգայինք և թէ մանաւանդ աշակերտաց ծնողք ծանօթանան սոցա իւրաքանչիւր առարկայի մէջ արած յառաջադիմութեանն ու վարուցը։